ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգային տնտեսության՝ որպես համաշխարհային տնտեսության բաղկացուցիչ մասի, գործունեության արդյունավետության գնահատման համար սկզբունքային նշանակություն ունեն նրանց մրցունակության որակական և քանակական բնութագրերը:

Ազգային մրցունակության դերի ուժեղացումը

Երկրի մրցունակությունը (ազգային մրցունակություն)՝ բարդ տնտեսական հասկացություն է: Գոյություն ունեն նրա բազմաթիվ բնութագրումներ, սակայն, սովորաբար, երկրի մրցունակության տակ հասկանում են նրա ընկերակցությունների և ճյուղերի ընդունակությունը, օտարերկրյա շուկաներում իրենց դիրքերի ամրապնդման և նվաճման գործում մրցակցից առաջ անցնելը: Բնական է, որ ազգային մրցունակությունը պայմանավորված է հենց այդ երկրում տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ գործոններով:

Ազգային մրցունակության հարցերը արտասահմանում գործնական, գիտական, քաղաքական շրջանների և պետական օրգանների կողմից մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Մրցունակությունը հանդիսանում է մասշտաբային գիտական և տնտեսական հետազոտությունների Ծրյեկտ, երկարատև երկխոսությունների, կառավարական և օրենսդրական մարմիններում պաշտոնական քննարկումների թեմա, ինչպես դա տեղի ուներ, օրինակ, ԱՄՆ-ում 80-ական թվականներին, որտեղ դրանց արդյունքում ընդունվել էր (1988թ.) Մրցունակության և առևտրի մասին հատուկ Համալիր օրենքը: Շատ երկրներում մրցունակության հարցերի կարգավորման վերաբերյալ (ԱՄՆ, Ֆրանսիա, Ճապոնիա և այլն) ստեղծվել են խորհուրդներ և այլ ազգային կազմակերպություններ:

Ազգային մրցունակությունը որոշում են այս կամ այն երկրի մրցունակ առավելությունների և թուլությունների ուսումնասիրման հիման վրա: Այդ ցուցանիշների մեջ միջազգային և հայկական պրակտիկայում առավել հաճախ օգտագործում են հետևյալները՝

- Համախառն Ներքին Արդյունքի (ՀՆԱ) ծավալը, որն արտահայտում է հայրենական շուկայի ծավալը և ազգային տնտեսության մրցունակության պոտենցիալը;
- Վերջնական սպառման ծախսերի բաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում և վերջնական սպառման մեջ տատանումային կուտակումները:
- Արտահանման-ներմուծման սալդոյի հարաբերությունը (տեսակարար կշիռը) երկրի արտաքին տնտեսական շրջանառության գումարին (բնութագրում է ազգային տնտեսության մրցունակության պոտենցիալի դինամիկան):
- Երկրի կողմից արտահանվող և ներմուծվող ապրանքների և ծառայությունների գների միջին ինդեքսների փոխհարաբերակցությունը:
- Երկրի «համեստության» աստիճանը մրցունակ ռազմավարության մշակման և իրականացման մեջ: Այն բնութագրում են պետությունների պարտքերի մեծության հարաբերությամբ ՀՆԱ-ին, երկրի պարտքերի միջև տարբերությամբ, որը ձևավորվել է տվյալ երկրում դեբիտորների վրա հասած վճարների և պահանջների պարտքերի նկատմամբ:
- Երկրի ոսկե-տարադրամային պահուստների աճը:
- Երկրի ՀՆԱ-ի կառուցվածքը, հատկապես, արդյունաբերության վերամշակող ճյուղերի կողմից ունեցած բաժինը:

1986 թվականից Համաշխարհային Տնտեսական Ֆորումի (ՀՏՖ) հովանու տակ սկսեցին հրատարակվել հանգամանալից զեկույցներ աշխարհի առաջատար երկրների համեմատական մրցունակության մասին, իսկ ավելի ուշ՝ Համաշխարհային բանկի և Միջազգային կառավարման մեթոդների կատարելագործման ինստիտուտի մշակումները:

Ազգային մրցունակությունը որոշվում է ՀՏՖ-ի բազմագործոն մոդելների հիման վրա, որտեղ 381 ցուցանիշները բերվում են 8 ագրեգացված խմբերի՝ ներքին տնտեսական պոլենցիալ, արտաքին տնտեսական կապեր, պետական կարգավորում, ֆինանսավարկային

համակարգ, ենթակառուցվածք, ղեկավարման համակարգ, գիտատեխնի-կական պոտենցիալ, աշխատանքային ռեսուրսներ:

Յուրաքանչյուր երկրի տնտեսական ցուցանիշները, որոնք կազմում են ամբողջ հանրագումարային տվյալների մոտ 70%-ը, լրացվում են վերլուծողների գնահատականներով, խոշոր ընկերակցությունների և ավտորիտար փորձագետների ղեկավարների հարցումներով, այսինքն իրականացվում է ազգային մրցունակության բնութագրերի որակական և քանակական համաձուլում:

Թվով մոտ 50 երկրներ աստիճանակարգվում են ըստ բալերի քանակի, որոնց գումարը թույլ է տալիս պատկերացում կազմել ոչ միայն արտադրողական ուժերի զարգացման մակարդակի, այլև համաշխարհային տնտեսությունում եղած փոփոխություններին համապատասխան ճկուն տնտեսական համակարգերի մասին:

1987-1993թթ. ցուցակը գլխավորում էր Ճապոնիան, սակայն արդեն 1994 թ-ին առանձին երկրներում նկատվող ճգնաժամային երևույթների (ԱՄՆ դոլարի իենի նկատմամբ եղած փոխարժեքի հետ), այն իջել էր 3-րդ տեղը: Հայաստանը առաջին անգամ գնահատվեց 1995 թ-ին և այդ սանդղակում գրավեց 67-րդ տեղը:

Նշենք նաև, որ միջազգային պրակտիկայում ազգային տնտեսության մրցունակության հաշվարկները դարձան առօրյա իրականություն, և ներկայումս համաշխարհային հանրության ուշադրությունը նրանց նկատմամբ ոչ միայն չի ընկնում, այլև աճում է:

Կուտակված փորձը ցույց է տալիս (այս մոտեցումները հաջորդաբար հիմնավորվում են Մ.Պորտերի «Միջազգային մրցակցություն» լայնորեն հայտնի հետազոտությունում), որ ազգային տնտեսության, նրա բաղկացուցիչ մասերի մրցունակությունը բավականին անկայուն մեծություն է: Մրցունակության առաջադրված մակարդակի պահպանումը պահանջում է ոչ միայն մշտական և հսկա լարում, այլ մտածված նպատակաուղղված ռազմավարական բնույթի գործողություն, որոնց մեջ հատկապես մեծ է պետության դերը: Նրա գործունեության գլխավոր ռազմավարական

ուղղություններից մեկը մրցակիցների նկատմամբ իր մրցունակ առավելությունների ապահովումն է:

Մրցունակ առավելության տեսությունը, առավել ամբողջական տեսքով ձևակերպված Մ.Պորտերի կողմից, դա երևում է նրանից, որ միանման տնտեսական զարգացման մակարդակով ցանկացած երկիր, ունի որոշակի, սովորաբար միայն իրեն բնորոշ մրցունակ առավելությունների համակարգ: Նրանց, օրինակ, կարող են պատկանել աշխատանքի արտադրողականության ավելի բարձր մակարդակներ, արտադրական, տեխնիկական, այս կամ այն ճյուղերի առևտրային անձնակազմի որակավորումներ, արտադրության առանձին կամ խումբ ձեռնարկություններ, արտադրության արտադրանքների որակը, տեխնիկատնտեսական ցուցանիշները և այլն:

Ազգային տնտեսության մրցունակության գործոնները

Մ.Պորտերի կոնցեպցիայում կենտրոնական տեղ է գրավում «ազգային շեղանկյան» գաղափարը՝ էկոնոմիկայի չորս գլխավոր հատկությունները բացահայտող («դետերմինանտներ»), ուսումնասիրվող երկրի մեջ գործող ֆիրմաների մրցունակ մակրոռլորտը ձևավորող:

«Ազգային շեղանկյունը» բացահայտում է դետերմինանտների համակարգը, որոնք գտնվելով փոխազդեցության մեջ, ստեղծում են երկրի հնարավոր մրցունակ առավելությունների իրացման համար բարենպաստ կամ անբարենպաստ միջավայր:

Որոշենք այս դետերմինանտները:

Գործոնների ցուցանիշները (արտադրության գործոններ) իրենցից ներկայացնում են ամբողջությամբ երկրի մրցունակ առավելությունների և նրա առաջատար արտահանման կողմնորոշող ճյուղերի ձևավորման համար անհրաժեշտ նյութական (իրային) և ոչ նյութական պայմաններ:

Ազգային մրցունակ առավելության ապահովման մեջ ոչ պակաս կարևոր դեր է խաղում նաև ֆիրմաների ռազմավարությունը, նրանց կառուցվածքը և մրցակցությունը նրանց միջև: Եթե մրցունակ միջավայրը կամ ֆիրմաների միջև մրցունակությունը բացակայում են, եթե մրցակցության պայմաններում ֆիրմաների ռազմավարությունը կողմնորոշված չէ

գործունեությանը, ապա այս դեպքում արտաքին շուկայում մրցունակ առավելություն սովորաբար չի ծագում:

Պահանջարկի ցուցանիշները՝ դա, նախ և առաջ պահանջարկի ծավալն է, նրա զարգացման դինամիկան, արտադրանքի լայն տեսակների տարբերակումը, գնողների պահանջկոտությունը ապրանքների և ծառայությունների նկատմամբ: Մինչև նոր արտադրատեսակների ելքը համաշխարհային շուկա, նրանք փորձաշրջան են անցնում ներքին շուկայում՝ անընդհատ աճող պահանջարկի պայմաններում:

Այնուհետև, ազգային էկոնոմիկայում բարձր զարգացած, իրար մոտ և աջակցող ճյուղերի առկայությունը՝ որն ապահովում է արտահանմանը կողմնորոշված ֆիրմաներին անհրաժեշտ նյութերով, տեղեկատվությամբ, կիսաֆաբրիկատներով, կոմպլեկտավորող արտադրանքներով և այլ նյութական միջոցներով, որը միաժամանակ հանդիսանում է համաշխարհային տնտեսությունում համապատասխան ճյուղերի ֆիրմաների համար մրցակցային առավելությունների ստեղծման և աջակցության անհրաժեշտ պայման:

Մրցունակ առավելությունների դետերմինանտների ընդհանուր համակարգի մեջ Մ.Պորտերն ընդգրկում է նաև պատահական իրադարձությունների դերը, որոնք կարող են ուժեղացնել, կամ թուլացնել երկրի կողմից ստեղծված մրցունակ առավելությունները: Այս տեսակի առավել կարևոր իրադարձություններին կարելի է դասել նոր հայտնագործությունները, խոշոր տեխնոլոգիական տեղաշարժերը, ռեսուրսների վրա գների կտրուկ փոփոխությունները (օրինակ, «նավթային շոկ»), համաշխարհային ֆինանսական շուկաներում նշանակալից փոփոխությունները (ինչպես դա տեղի ուներ 1997-1998թթ.) կամ արտարժութային փոխարժեքների փոփոխությունները (հայկական դրամի անկումը 1994 թ-ի գարնանը, ռուսական ռուբլու անկումը 1998թ. օգոստոսին), համաշխարհային կամ տեղական պահանջարկի բռնկումները, կառավարության քաղաքական որոշումները, պատերազմները և այլ անկանխատեսելի իրավիճակներ:

Վերջապես, ազգային մրցունակ առավելությունների ձևավորման մեջ

կառավարության դերը կայանում է «ազգային շեղանկյան» բոլոր հիմնական դետերմինանտների վրա նշանակալից ազդեցություն թողնելու մեջ: Ընդ որում այդ ազդեցությունը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Արտադրության գործոնների և պահանջարկի ցուցանիշների վրա կառավարությունը ազդում է իր տնտեսական քաղաքականությամբ, ներառյալ բնականաբար, արտաքին տնտեսական քաղաքականությունը: Մասնավորապես, շատ երկրներում կառավարությունը աջակցում է իրար մոտ և բևեռացված ճյուղերի զարգացմանը, որոնք փոխկապակցված են արտահանմանը կողմնորոշված ճյուղերի հետ:

Բնականաբար, բացի Մ.Պորտերի ազգային էկոնոմիկայի մրցունակության գործոնների նկատմամբ մոտեցումներից, հայրենական և օտարերկրյա հետազոտություններում տարածում ստացան և այլ հայացքներ: Այսպես, բավական հետաքրքրություն են ներկայացնում հետևյալ քառակի գործոնային մոդելը՝ ռեսուրսներով, առաջին հերթին մարդկային ռեսուրսներով օժտվածությունը, տեխնոլոգիաները և ներդրումները, կապիտալը, արտաքին տնտեսական գործոնը: Ընդ որում վերջին 15-20 տարում տեղի ունեցան էական տեղաշարժեր նշված գործոնների նշանակության և հարաբերակցության մեջ:

Բնական ռեսուրսները նախկինի պես մնում են երկրի տնտեսության զարգացման կարևորագույն գործոններից մեկը, շատ բանով համաշխարհային տնտեսությունում նրա տեղը որոշողը: Դրա հետ մեկտեղ մի շարք պատճառներով փոխվում է այս գործոնի նշանակությունը: Բանը միայն նրանում չէ, որ գիտատեխնիկական առաջընթացը նպատակասլաց փոխակերպում է արտադրության վառելիքա-հումքային բազան, շրջանառության մեջ է մտցնում փոխարինիչներ, սինթետիկ նյութեր և այլն: Մի շարք երկրների փորձը (Ճապոնիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա, Շվեցարիա, Գերմանիա) ապացուցում է, որ նշանակալից բնական ռեսուրսների բացակայությունը չի հանդիսանում նրանց տնտեսական զարգացման, միջազգային մրցունակության բարձր մակարդակի հասնելու անհաղթահարելի արգելք: Ընդհակառակը, նշանակալից բնական ռեսուրսներով օժտվածությունը կարող է ունենալ և բացասական հետևանքներ, ծնելով

համաշխարհային տնտեսությունում ինտեգրացիայի «հեշտացրած» ձևեր, պահելով այլ ռեսուրսների ճկունությունը, որոնք ժամանակակից պայմաններում կարող են թվալ, թերևս, ավելի կարևոր և հեռանկարային (մարդկային գործոնը, ինովացիոն գործունեությունը, արտադրության ինտենսիվությունը և այլն): Դա ակնառու կերպով հաստատում է նախկին ԽՍՀՄ-ի, այսօրվա Հայաստանի և մի շարք այլ երկրների օրինակը:

Ազգային մրցունակ առավելություններին աջակցության գործում ընդհակառակը, բարձրացել է աշխատանքային ռեսուրսների դերը: Ընդ որում այս փաստն արտացոլում է գտնում և տեսության մեջ, և պրակտիկայում: Մինչև վերջին ժամանակներս ինչպես օտարերկրյա, այնպես էլ հայրենական հետազոտողները հիմնական ուշադրությունը հատկացնում էին աշխատուժի համեմատական թանկության և էժանության խնդրին, հաշվելով, որ երկիրն ավելի էժան աշխատուժով հայտնվում է ավելի շահավետ վիճակում: Գիտա-տեխնիկական առաջադիմության ժամանակակից պայմաններում ավելի շատ ուշադրություն են դարձնում մարդկային գործոնին, որակավորման մակարդակին, կարգապահությանը, ինովացիոն պոտենցիալի առկայությանը: Հետևաբար, առաջնությունը ավելի հաճախ տրվում է ավելի որակավորված, նույնիսկ ավելի թանկարժեք աշխատանքային ռեսուրսներին:

Բնական ռեսուրսների համեմատական իջեցման և մարդկային ռեսուրսների դերի բարձրացման մեջ որոշիչ դեր է խաղացել մրցունակության գործոնների ազդեցության համակարգերի «տեխնոլոգիական բաղադրիչ-ները»: Հատկապես այս բաղադրիչը կտրուկ փոխում է (և տեսական, և պրակտիկ) մրցունակության վրա ազդեցության գործոնների բնույթի, աղբյուրների մասին ավանդական պատկերացումները, այնպես, ինչպես ազգային էկոնոմիկայի «համեմատական առավելությունների» մասին արտաքին առևտրի տեսության լույսի տակ:

Վերջին երկու տասնամյակում ազգային մրցունակ առավելությունների և թերությունների վրա տեղի ունեցավ արտարժութային գործոնի ազդեցության բնույթի և աստիճանի էական փոփոխություն: Մինչ վերջին ժամանակներս անվիճելի ճշմարտություն է եղել հետևյալը՝ ազգային արժույթի փոխարժեքի իջեցումն անպատճառ նպաստում է արտահանման

ընդլայնմանը և արգելակում է ներմուծումը, իսկ արտարժութային փոխարժեքի բարձրացումը՝ գործում է հակառակ ուղղությամբ: Այժմ արդեն կարելի է խոսել փոխարժեքների միանշանակ և ուղղագիծ կախվածության մասին: 80-ական թվականների ընթացքում և 90-ական թվականների առաջին կեսում, գերմանական մարկի և ճապոնական իենի կուրսը ԱՄՆ դոլարի նկատմամբ, ավանդական սպասումներին հակառակ, չբերեց արտահանման ակտիվության կրճատմանը և համաշխարհային տնտեսությունում այս երկու առաջատար երկրների ներմուծման կրճատմանը, չնայած, որ նրանց մոտ առաջացնում էր որոշակի խնդիրներ: Դրական արտաքին առևտրային հաշվեկշիռը Գերմանիայում և Ճապոնիայում այս ժամանակաընթացքում նշանակալիորեն աճեց, ընդ որում ազգային էկոնոմիկայի ոչ լճացման կամ ոչ էլ ներմուծման կրճատման հաշվին:

Համաշխարհային տնտեսության մեջ երկրի դիրքը որոշող գործոնների շարքում վաղուց ի վեր կարևոր տեղ էին գրավում ներքին և համաշխարհային շուկաները: Սակայն վերջին երկու-երեք տասնամյակներում նրանց միջև տեղի ունեցավ նկատելի տեղաշարժ հօգուտ վերջինիս, որն ավելի շատ նշանակալիորեն որոշում է ազգային շուկաներում մրցակցային պայմանները և սրությունը, հասցնելով նրան ավելի բարձր մակարդակի վրա: Միջերկրային շուկան որոշում է մրցունակության մակարդակի ինչ-որ «միջին համաշխարհային» մակարդակ, որին պետք է ձգտեն ազգային տնտեսություն-ները և ապրանք արտադրողները, իսկ հնարավորության դեպքում և անցնեն նրանից: Գնալով ավելի կարևոր է դառնում ներքին շուկայի խնդրի այնպիսի ասպեկտը, ինչպիսին նրա կառուցվածքի, գնային համաչափության, կազմակերպչական ձևերի համապատասխանությունն է համաշխարհային շուկային և համաշխարհային տնտեսության չափանիշներին:

Հաշվի առնելով դա, ազգային տնտեսության կայունության և դինամիկ զարգացման հիմքը հանդիսանում է արտահանման զավթողականությունը: Երկրի աշխարհատնտեսական դրությունը այնքանով ավելի ամուր է, որքան շատ քանակությամբ տարբեր տեսակի արտադրանք է նա արտահանում, որքան շատ թվով միջազգային վերարտադրող

ռեգիոններում է նա ընդգրկված: Մասնագիտացումը և դիվերսիֆիկացիան չեն հակասում միմյանց, քանի որ համաշխարհային տնտեսական մասշտաբով միջճյուղային մասնագիտացման փոխարինման է գալիս ներքին ճյուղայինը (համապատասխանաբար համաշխարհային տնտեսությունում ընկնում է այն երկրների դերը, որոնք չկարողացան ընդգրկվել աշխատանքի միջազգային բաժանման մեջ նոր մակարդակով): Հետևաբար, տարբեր ճյուղերի ներսում անհրաժեշտ է շոշափել «աճի կետերը», որոնք ընդունակ են հեռանկարում լրացնել համաշխարհային շուկայում կարևոր որմնախորշերը:

Բացի դրանից, մրցունակության վերլուծության դեպքում հատուկ ուշադրություն է դարձվում այնպիսի բնութագրերին, ինչպիսիք են ճկունությունը և շարժունակությունը, ազգային տնտեսության ընդունակությունը արագ և համադրելիորեն անդրադառնալու համաշխարհային տնտեսությունում և համաշխարհային շուկայում անսպասելի փոփոխություններին, «հանգցնել» ռեսուրսային, տարադրամային և այլ տեսակի «շոկերը» (ցնցումները), ի հայտ բերել և օգտագործել համաշխարհային շուկայում բացվող հնարավորությունները, արտաքին շուկաներում իրենց դիրքերի ամրապնդման համար ստեղծել նոր հենքեր: Արևմտյան տնտեսագետների հաստատմամբ, ժամանակակից ազգային տնտեսությունների հարմարվողականությունը ձեռք է բերում այնպիսի նշանակություն, ինչպիսին արդյունաբերական և ֆինանսական հզորությունն է: